

բանաւ, եւ ել ուրիշ յոյս չի մնաց դիմադրելու, բոլոր արաբացի խումբը կը դիմեր ներս կատաղաբար: Ո՛ր վիտի պաշտպաններ այդ գազաններուն դէմ խեղճ կանայք եւ մանկտիք, քանի մը զինեալ սպասաւորք դռները եւ պատուհանները ամրացուցեալ կահ-կարասեօք՝ վերջին եւ անյոյս ճիգ մը թափեցին դիմադրութեան, քանի մը յուսահատ կանայք աչվնին դարձած՝ յիմարացեալ յուսահատութենէ եւ երկիւղէ վերի բարձր պատուհաններէն ինչ որ ձեռվնին կը հանդիպէր կը նետէին այն պատերազմողաց վրայ, որ տապարներով եւ մուրճերով կը ջանային դուռն պատուհան կոտրելու, եւ ահագին ցոլերով երկաթի վանդակներ կը ճարճատեցնէին:

Կին մը միայն, որ այս վիճակը կը տեսներ եւ որուն երեսին վրայ նկարուած էր այլայլութիւն եւ յուսահատութիւն, Բիւրեղ տիկին, առանց ինքզինք կորսնցնելու իր կենաց պահպանութենէն աւելի ուրիշ մտածութիւն մը մտքին մէջ յանկարծ գալով, մտաւ իր աղջկանց սենեակը, տեսաւ Նազենիկը, որ գոգալով ծունկի վրայ կ'աղօթէր, իւր քրոջ անկողնին քով, որ հանգիստ եւ անխռով կը քթեանար: Այդ կինը, որուն աչքերը ոչ արտասուքով այլ արիւնով լցուած էին, առանց խօսելու գրկեց մէկը եւ միւսին ձեռքէն բռնելով՝ կայծակի արագութեամբ վազելով իջաւ սանդուխներէն վար, իջաւ պարտեզին գահերէն վար, մինչեւ լճին եզերքը. հոն դրաւ փոքրիկ մակոյկին մէջ տղան. մտուց իւր շփոթած աղջիկը, եւ ինքն որ մտաւ, «փա՛ռք քեզ աստուած իմ» աղաղակեց եւ թիակ մը ձեռքին առած բացուեցաւ ցամաքէն, ուրախութեան ծիծաղ մը եկաւ երեսին, եւ երկու ձեռքով աղջկանը փաթաթուելով. «Ահա ազատեցանք, Նազենիկս, մեր պատիւը անարատ կրնանք հոս այս լճիս մէջ թաղել»,— ըսաւ: Իսկ այդ քնքուշ եւ միամիտ աղջիկը. «Յոս չէն կրնա՞ր հասնիլ ուրեմն այդ անզգամները, մայրիկ»,— կը հարցնէր: Իսկ փոքրը՝ զարմացած, շփոթած իւր սուր եւ սեւ աչքերէն քունը թօթափելով. «Ո՛ր կ'երթանք մայրիկ, դու գիտե՞ս թիավարել»,— կ'ըսէր: «Այո, զաւակս, այսօր պիտի թիավարեմ»,— ըսաւ եւ թիակներն անցուց եւ սկսաւ ամենայն զօրութեամբ հեռանալ՝ ուղղուիլ դէպի այդ լճակին միմիայն փոքրիկ կղզին. միշտ աչքերը դէպի ամրոցն ունեւով: Խեղճ կինը այդ լճակը փոքրիկ կը գտներ եւ այդ յուսահատութեան մէջ դեռ նուազ յոյս մը կը պահէր եթէ մէկը այդ գազաններէն զինքը չի տեսներ. բայց աչն յոյսն էլ ոչնչացաւ, երբ հազիւ թէ կղզուոյն եւ բերդին մէջտեղի միջոցն հասաւ, տեսաւ, որ մէկ, երկու, երեք եւ դեռ քանի մը հատ ճիւղներ իրենց մէջ կը խոսէին. թեպէտ լեզունին չէր հասկնար, բայց կ'իմանար իրենց շարժմունքէն թէ իւր վրայ կը խոսէին, եւ իրեն հասնելու հնարք կը փնտրէին: Յուսահատութիւնը արտաքոյ կարգի զօրութիւն մը տուած էր իրեն, զարմանալի յաջողութեամբ կը թիավարէր եւ նոյն միջոցին կը եսներ, որ քանի մը հատ այդ ճիւղներէն կը թողուին իրենց զգեստները կը նետուէին ջուրը չուր ետեւէն. ոմանք շուտ մը ետ կը դառնաչին, բայց ահագին խափշիկ մը